

ԲԱՆՁԻՍԱՐԱՑ

եղել է Ղրիմի խանության կենտրոնը: Թաթարների տիրապետության շրջանում տյատեղ բնակվել է 300 հայ ընտանիք: 1632 թ. գրված ձեռագիր հիշատակարաններից մեկում նշված է. որ տեղի հայերն ունեցել են Ս. Սատվածաժին անվամբ եկեղեցի⁹¹, ժայռափոր կերտվածքով: Նույնպիսի եկեղեցի, Գրիգոր Լուսավորչի անունը կրող, հիշատակվում է 1700 թվականի մեկ այլ ձեռագիր մաայանում⁹²: Գրիգոր Լուսավորչի եկեղեցում հինգ ամիս շարունակ քահանայագործել է ակա-նավոր րանաատեղծ Խոջատուր Կաֆայեցին (Խաչգոռղը)⁹³: Մ. Բժշկյանի շրջագայության ժամա-նակ այստեղ ապրել են քսան հայ ընտանիք և ունեցել են Ս. Սատվածաժին քարաշեն, ղմրեթավոր եկեղեցին⁹⁴: Ճանապարհորդը նշում է ըողմաթիվ լաչքարերի առկայությունը, սակայն գրտնք մեզ չեն հասել:

391. Բախչիսարայ. Թանգարանի քարեդարան:

Կառույցի բարավոր՝ կրաքարից: Բերված է Կուրինո գյուղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցուց: 1594 թ. հունարեն արձանագրության աջ կողմում մանրատառով՝ 5 տող.
ԵՍ ՄԱՆՈՒԿ/Ի ՈՐԴԻ ԱՍՎԱ/ՏՈՒՐ ԵՐԷՑ/ Ի ԹՎ. ՌՃԽԲ (1693) ԻՆ:

Բախչիսարայի պատմահնագիտական Թանգարանի աշխատակիցները միջնադարյան Ուս-պենսկի տաճարի քարանձավներից մեկում հայտնաբերել են հետևյալ եռատող հայերեն արձա-նագրությունը, որի շուտանկարը մեզ ուղարկեց (1968 թ. հունիսի 18-ին) հիշյալ Թանգարանի տնօրեն Ի. Զուրիկովը:

392.

ՎԱՐԴԵՐ/ԷՍ ԱՆՏԻՐԱՍ/ՕՎ:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ-ԽԵՐՍՈՆԵՍ

Սեաստոպոլ քաղաքում հայկական պատմական հուշարձաններ չկան: Խերսոնես քաղաք-Թանգարանի ֆոնդերում (քարեդարանում) այժմ պահպանվում են մարմարակերտ ըզմաթիվ ըե-կորներ, որոնցից մեկի վրա հաղիվ ընթերցվում է՝

Մ-Ր ՄԱԻՐ-ՄՕՐ/:

Ն. Յա. Մառը հրատարակել է Խերսոնեսում գտնված հայերեն երկու մակագրություն⁹⁵, որոնցից մեկը հայանարել է 1902 թ. խաչաձև հատակագծով կառուցված նորագյուտ եկեղեցու որմին, ուր նա ընթերցել է.

393.

Այն Ո/րեհա Ա/՝ Այս Ի աԼաժԼաժ Ե Մխիթար ծառայ Այ...

91 Տե՛ս Վ. Ա. Միքայելյան, Ղրիմաֆայոց պատմություն, Երևան, 1989, էջ 44:

92 Նույն տեղում, էջ 44-45:

93 Նույն տեղում, էջ 45:

94 Մ. Բժշկյան, էջ 276:

95 Н. Марр, Замётки о двух армянских надписях, найденных в Херсонесе. Отдельный оттиск из „Известии императорской археологической комиссии“, N.9, с. 38.

Ծանոթ. Փորագրված է գլխագիր և մանր տառերով անվարժ ձեռքի արդյունք է⁹⁶: Հրատարակիչը թվագրում է XVI-XVII դարերով:

394. Նույն նորարաց աաճարում, մարմարե ըեկորի վրա եղած հունարեն արձանագրության ստորե.

/Ք/աջք ի...ոյս Այ...⁹⁷

2ՈՒՐԳՈՒՆ ԳՅՈՒՂ (Սևաստուպոլի մոտ)

Տապանաքար քանդակաղարգ, Քրիստոսի խաչելության պատկերով, վրան 4 առանձին արձանագրություն. գտնվել է շինարարական աշխատանքների ժամանակ: Տավրիկյան արխիվային հանձնաժողովը, Դ. Դ. Լաշկովի միջոցով տապանաքարը հանձնել է Սիմֆերոպոլի թանգարանին: Հիշյալ հանձնաժողովի նախագահ Ա. Ի. Մարկովիչը արձանագրությունների լուսանկարն ուղարկել է Քուչուկ-Հովհաննիսյանին, որի վերծանությունները խիստ կասկածելի են: Սիմֆերոպոլում եղած ժամանակ թանգարանի աշխատակիցների հետ միասին քարեգարանում փնտրեցինք այս քարը, սակայն չգտանք:

Բնագիրը տալիս ենք Քուչուկ-Հովհաննիսյանի վերծանությամբ, որի ճշտությունը չենք երաշխավորում:

395.

ա/ Այս է հանգստեան տապանաց անգի Հիմանան
[նեբաէ] յի [գու] սար Այպեքէի, որգի Քամոսնայի
... էն. որք մի ամիս քննչ որ կան.

...ի տապանաի. մի օր ոչ ելև մեզ ալիելի

...Հարս նալելի, որգի ծնել...ժամտնի

.../ցաւոքն մորմոքէի. արու որգիս այս ծնանի

[Առաւ]ել, զը գԳեորգայ եո ծնունդն աւուրց

...ննջողը գսմատն է հող աապանի:

ր/ Յիշատակ է Յոհաննէ յի

Ջարմիցս իսկքնագի.

Բայց ես գերիս... ասա ոչ էի.

Կոստանգինոսի համրաւն առի

եւ. Ղուկասի, որ նոր լսեցի՝

Ջկողակիցն իմ ի աապանի

Հեր գալիս սա ափէս անսի

նմանենաս իսկագարի:

նա լլարի [Սար]գսի

96 Там же, с. 40-41.

97 Там же.